

էջը անբաւական կու գայ իր մէջ, վրան առնելու որ-բուլթեան մը մէկ հատիկ տարին: Ո՞ւր դնել, ինչպէ՞ս նուաճել այն միւսները, ասոնք ալ ժամանակի կտորներ, բայց մասնաւորուած, անձնացած տօնի, տաղաւարի եղանակներէ, որոնց իւրաքանչիւրին համար կեանքը կը բաշխէ նոր կտաւ, նոր ապրում: Որոնք կու գան «իրենց սարիքով»ը: Խորհած ունի՞ք, թէ ինչու Կաղանդ Պապան կը մոռնայ կարգ մը տուններ, գիւղեր երբեմն, քաղաքներ ու երկիրներ: Կու գան օրերը ուրիշներուն համար: Բայց քեզի, որ ո՛րք ես...: Ո՞ւր վէպը՝ որ համարձակէր մօտե-նալ, իր խորութեան ու մասերուն լման սարսափին մէջ, միթերքին այն հարազատ ապրումներուն -առանց վերա-դիրի- որոնք դիզուին պիտի մեր ուսերուն, աւելի ճիշդը՝ մեր ջիղերուն ու իրենց ներքին սոսկումին քսամենելի ժանգը պիտի բիւրեղեն, հիւսեն անոնց, այդ անուշիկ լա-րերուն, որոնց դերն էր ըլլալ շքեղ ընդունարան, թրթր-թրուագին նուագարան հովէն ու ծովէն, խոտէն ու ծաղիկէն, խաղէն ու երգէն ծիածանուող ամէն ծուկնի, ամէն հեշտանքի, ամէն սարսուռի, ինչպէս են ճակատա-գիրները մանուկներու ջիղերուն ուրիշ-ուրիշ երկիրներու երեսին ու մեր մօտն ալ՝ հորթերուն, գառներուն, ձգուած արօտին մէջը աշխարհին համերուն, կեանքին քաղցրու-թեանց:

Եղեր է, որ նախանձով նայիմ շան իսկ լակոտնե-րուն, որոնք յարգանքով կը պարուրուէին անորակելի ձեռքերէ տասը հայ մանուկ տասը վայրկեանի մէջ անթարթ մորթոտող: Ժա՛նգը՝ մեզ վիրաւորող, մեզ թու-նաւորող՝ իրարմէ խորունկ անարդարութեանց, որոնցմէ փոքրագոյնն իսկ այնքան բարձրակայլակ կ'իյնայ մեր որբութեան ճախնահար հոգեվիճակին, ուրիշներուն ա-ռատ, անարգել վայելքովը կրկնապէս կարկառի ելած զրկանքը առաջին ու երկրորդ մանկութիւններուն, որոնք այդ խախուտ, դեղին, սմքած, դդմած յուզումներուն սպիները կարծես կը յաւերժեն մեր հոգիին երեսին ու ա՛լ չեն անհետիր քսանին դռներուն մեզ ընել լեղիէն